

ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ

Հայաստանի Հանրապետության կառավարության և Վրաստանի գործադիր
իշխանության միջև

ԱՊՐԱՆՔՆԵՐԻ (ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ, ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ)

ԱՐՏԱՀԱՆՄԱՆ ԵՎ ՆԵՐՄՈՒԾՄԱՆ ԺԱՄԱՆԱԿ

ԱՆՈՒՂՂԱԿԻ ՀԱՐԿԵՐԻ ԳԱՆՁՄԱՆ ՍԿԶԲՈՒՆՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Հայաստանի Հանրապետության կառավարությունը և Վրաստանի
գործադիր իշխանությունը՝ հետագայում անվանվելով Պայմանավորվող
Պետություններ,

ձգտելով տնտեսության մերձեցման հետագա խորացմանը, տնտեսվարող
սուբյեկտների համար հավասար հնարավորությունների ստեղծմանը և
բարեխիղճ մրցակցության համար պայմանների սահմանմանը,

հետևելով միջազգային առևտրի համընդհանուր նորմերին և կանոններին,

համաձայնվեցին հետևյալի մասին.

Հոդված 1

Ընդհանուր դրույթներ

Սույն Համաձայնագրի նպատակներով.

ա) «անուղղակի հարկեր» տերմինը նշանակում է ավելացված արժեքի հարկ
և (կամ) ակցիզ (ակցիզային հարկ կամ գանձույթ),

բ) «նշանակման վայրի սկզբունք» տերմինը նշանակում է մի
Պայմանավորվող Պետության մաքսային տարածքից ապրանքների
(աշխատանքների, ծառայությունների) արտահանման ժամանակ գրոյական
դրույքաչափի կիրառում և մյուս Պայմանավորվող Պետության մաքսային
տարածք ապրանքների (աշխատանքների, ծառայությունների) ներմուծման
ժամանակ հարկում՝ գործող դրույքաչափով ու ներքին օրենսդրությամբ
սահմանված կարգով,

գ) «գրոյական դրույքաչափ» տերմինը նշանակում է ավելացված արժեքի
հարկով հարկում 0% դրույքաչափով, ինչը հավասարազոր է ավելացված արժեքի
հարկից ամբողջությամբ ազատմանը,

դ) «փրավասու մարմիններ» տերմինը նշանակում է,
համապատասխանաբար, Հայաստանի Հանրապետության ֆինանսների և
էկոնոմիկայի նախարարություն և Վրաստանի ֆինանսների նախարարություն:

Հոդված 2

Արտահանման ժամանակ հարկերի գանձման սկզբունքը

1. Մի Պայմանավորվող Պետությունն անուղղակի հարկերով չի հարկի
անմիջականորեն մյուս Պայմանավորվող Պետության տարածք արտահանվող
ապրանքները (աշխատանքները, ծառայությունները):

2. Սույն հոդվածի 1-ին կետի դրույթը ավելացված արժեքի հարկի
նկատմամբ նշանակում է, մասնավորապես, նշանակման վայրի սկզբունքի
կիրառում:

Հոդված 3 Ներմուծման ժամանակ հարկերի գանձման սկզբունքը

1. Մի Պայմանավորվող Պետությունը անմիջականորեն մյուս Պայմանավորվող Պետության տարածքից ներմուծվող ապրանքները (աշխատանքները, ծառայությունները) կհարկի անուղղակի հարկերով իր օրենսդրությանը համապատասխան: Այդպիսի հարկումը կարող է իրականացվել առաջինը հիշատակված Պայմանավորվող Պետության մաքսային մարմինների կողմից՝ իր մաքսային տարածք ապրանքների ներմուծման ժամանակ:

2. Ներմուծվող ապրանքների համար ակցիզը գանձվում է այդպիսի ապրանքների մաքսային արժեքից:

3. Ներմուծվող ապրանքների համար ավելացված արժեքի հարկը գանձվում է այդպիսի ապրանքների մաքսային արժեքի և ակցիզների գումարից:

4. Աշխատանքների և ծառայությունների ներմուծման սահմանմանը վերաբերող ներքին օրենսդրության դրույթներից անկախ, Պայմանավորվող Պետություններից յուրաքանչյուրը կարող է կիրառել աշխատանքների և ծառայությունների ներմուծման նկատմամբ մյուս Պայմանավորվող Պետության կողմից կիրառվող սկզբունքները և մոտեցումները:

5. Մի Պայմանավորվող Պետություն անմիջականորեն մյուս Պայմանավորվող Պետությունից ներմուծվող ապրանքների (աշխատանքների, ծառայությունների) հարկման ժամանակ առաջինը հիշատակված Պայմանավորվող Պետությունը կկիրառի իր ներքին շուկայում արտադրված կամ իրացվող համանման ապրանքների (աշխատանքների, ծառայությունների) համար սահմանված հարկերի դրույքաչափերը, արտոնությունները և հաշվարկման կարգը:

Հոդված 4 Վիճահարույց հարցերի լուծումը

1. Պայմանավորվող Պետությունները կձգտեն երրորդ երկրների հետ առևտրում հարկման հարցերի առումով միասնական մոտեցմանը: Իրավասու մարմինները կմշակեն սույն կետի գործողության կոնկրետ կարգը՝ հաշվի առնելով հարկային օրենսդրության պահպանման հարցերում համագործակցության և փոխադարձ օգնության բնագավառում նախկինում ձեռք բերված պայմանավորվածությունները:

2. Սույն Համաձայնագրի դրույթների մեկնաբանման կամ կիրառման վերաբերյալ բոլոր վեճերը և տարաձայնությունները կլուծվեն Պայմանավորվող Պետությունների միջև բանակցությունների և խորհրդակցությունների միջոցով:

Հոդված 5 Եզրափակիչ դրույթներ

1. Սույն Համաձայնագիրն ուժի մեջ է մտնում դրա ուժի մեջ մտնելու համար Պայմանավորվող Պետությունների կողմից անհրաժեշտ ներպետական ընթացակարգերի կատարման մասին վերջին գրավոր ծանուցումը ստանալու օրվանից և կկիրառվի:

դրա ուժի մեջ մտնելուց հետո առաքված ապրանքների նկատմամբ (ապրանքների առաքման ամսաթիվը կհամարվի դրանց բեռնման ամսաթիվը),

դրա ուժի մեջ մտնելուց հետո իրականացված կամ մատուցված աշխատանքների կամ ծառայությունների նկատմամբ (աշխատանքների իրականացման կամ ծառայությունների մատուցման ամսաթիվ կհամարվի այդպիսի աշխատանքները կամ ծառայությունները սկսելու ամսաթիվը):


2. Սույն Համաձայնագրի ուժի մեջ մտնելու օրվանից կորցնում են իրենց ուժը երկու Պայմանավորվող Պետությունների միջև կնքված այլ միջազգային համաձայնագրերում անուղղակի հարկերին վերաբերող դրույթները:

3. Սույն Համաձայնագիրն գործում է դրա ուժի մեջ մտնելու օրվանից հինգ տարվա ընթացքում և դրա գործողության ժամկետը ինքնաբերաբար երկարաձգվում է հաջորդող հնգամյա ժամանակահատվածների, եթե Պայմանավորվող Պետություններից որևէ մեկը, համապատասխան ժամկետի լրանալուց առնվազն վեց ամիս առաջ, գրավոր չծանուցի մյուս Պայմանավորվող Պետությանը Համաձայնագրի գործողությունը դադարեցնելու իր մտադրության մասին:


Կատարված է Երևան քաղաքում, 1998 թվականի սեպտեմբերի 26-ին, երկու բնօրինակով, յուրաքանչյուրը հայերեն, վրացերեն և ռուսերեն լեզուներով, ընդ որում բոլոր տեքստերն էլ հավասարազոր են:

Սույն Համաձայնագրի դրույթների մեկնաբանման տարաձայնությունների առաջացման դեպքում գերակայությունը տրվում է ռուսերեն լեզվով տեքստին:

Հայաստանի Հանրապետության
կառավարության կողմից



Վրաստանի գործադիր
իշխանության կողմից

3. 

СОГЛАШЕНИЕ

**между
Правительством Республики Армения
и
Исполнительной Властью Грузии**

О ПРИНЦИПАХ ВЗИМАНИЯ КОСВЕННЫХ НАЛОГОВ ПРИ ЭКСПОРТЕ И ИМПОРТЕ ТОВАРОВ (РАБОТ, УСЛУГ)

Правительство Республики Армения и Исполнительная Власть Грузии, именуемые в дальнейшем Договаривающиеся Государства,

стремясь к дальнейшему углублению интеграции экономики, созданию равных возможностей для хозяйствующих субъектов и установлению условий добросовестной конкуренции,

ориентируясь на общепринятые нормы и правила международной торговли,

согласились о нижеследующем:

Статья 1 Общие определения

В целях настоящего Соглашения:

а) термин "косвенные налоги" означает налог на добавленную стоимость и (или) акциз (акцизный налог или сбор).

б) термин "принцип места назначения" означает применение нулевой ставки при экспорте товаров (работ, услуг) с таможенной территории одного Договаривающегося Государства и обложение по действующей ставке и установленному внутренним законодательством порядку при импорте товаров (работ, услуг) на таможенную территорию другого Договаривающегося Государства.

в) термин "нулевая ставка" означает обложение налогом на добавленную стоимость по ставке 0%, что равнозначно полному освобождению от налогов на добавленную стоимость.

г) термин "компетентные органы" означает, соответственно, Министерство финансов и экономики Республики Армения и Министерство финансов Грузии.

Статья 2

Принцип взимания налогов при экспорте

1. Одно Договаривающееся Государство не будет облагать косвенными налогами товары (работы, услуги), экспортируемые непосредственно в другое Договаривающееся Государство.

2. Положение пункта 1 настоящей статьи в отношении налога на добавленную стоимость означает, в частности, применение принципа места назначения.

Статья 3

Принцип взимания налогов при импорте

1. Одно Договаривающееся Государство будет облагать косвенными налогами товары (работы, услуги), импортируемые непосредственно из другого Договаривающегося Государства, в соответствии со своим законодательством. Такое налогообложение может осуществляться таможенными органами первого упомянутого Договаривающегося Государства при ввозе товаров на его таможенную территорию.

2. Акциз по импортируемым товарам взимается с таможенной стоимости таких товаров.

3. Налог на добавленную стоимость по импортируемым товарам взимается с суммы, образуемой таможенной стоимостью таких товаров и акцизов.

4. Независимо от положений внутреннего законодательства, касающихся определения импорта работ или услуг, каждое из Договаривающихся Государств может применять те же принципы и подходы, которые применяются в отношении импорта работ или услуг другим Договаривающимся Государством.

5. При налогообложении товаров (работ, услуг), импортируемых одним Договаривающимся Государством непосредственно из другого Договаривающегося Государства, первое упомянутое Государство будет применять те же налоговые ставки, льготы и порядок расчета, которые установлены для аналогичных товаров (работ, услуг), произведенных или реализуемых на его внутреннем рынке.

Статья 4

Решение спорных вопросов

1. Договаривающиеся Государства будут стремиться к единому подходу в отношении вопросов налогообложения при торговле с третьими странами. Компетентные органы разработают конкретный порядок действия настоящего пункта, с учетом положений ранее достигнутых договоренностей в области сотрудничества и взаимной помощи по вопросам соблюдения налогового законодательства.

2. Все споры и разногласия относительно толкования или применения положений настоящего Соглашения будут решены путем консультаций и переговоров между Договаривающимися Государствами.

Статья 5

Заключительные положения

1. Настоящее Соглашение вступает в силу со дня получения последнего письменного уведомления о выполнении Договаривающимися Государствами внутригосударственных процедур, необходимых для его вступления в силу и будет применяться:

в отношении товаров - поставленных после его вступления в силу; (датой поставки товаров будет считаться дата их отгрузки);

в отношении работ или услуг - осуществляемых или оказываемых после его вступления в силу; (датой осуществления работ или оказания услуг будет считаться дата начала таких работ или услуг).

2. С даты вступления в силу настоящего Соглашения теряют силу, в отношении косвенных налогов, положения иных международных соглашений, заключенных между двумя Договаривающимися Государствами.

3. Настоящее Соглашение действует в течении пяти лет со дня его вступления в силу и автоматически продлевается на последующие пятилетние периоды, если ни одно из Договаривающихся Государств, не позднее чем за шесть месяцев до истечения соответствующего срока, письменно не уведомит другое Договаривающееся Государство о своем намерении прекратить его действие.

Совершено в г. Ереване, 26-го сентября 1998 года в двух подлинных экземплярах, каждый на армянском, грузинском и русском языках, причем все тексты имеют одинаковую силу.

В случае разногласий при толковании настоящего Соглашения преимущество отдается тексту на русском языке.

За Правительство
Республики Армения

A stylized handwritten signature in blue ink, consisting of several loops and a long horizontal stroke.

За Исполнительную Власть
Грузии

A handwritten signature in blue ink, featuring a series of connected loops and a final downward stroke.